ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ի 894

Ի 894 ԻՐԱՎԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ: ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ 05-06. VII. 2013/ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.—Եր.: Զանգակ, 2014.— 120 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2013 թվականի հուլիսի 5–6-ը Երևանում անցկացված իրավարանների համահայկական երկրորդ համաժողովի նյութերը:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-9939-68-275-4

© ՀՀ սփյուռքի նախարարություն, 2014
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2014

Ցեղասպանության դատապարտման միջազգային կոնվենցիայի IX հոդվածը սահմանում է Արդարադատության միջազգային դատարանի իրավասությունները, որոնք վերաբերում են ցեղասպանություն կատարած պետության պատասխանատվության հետ կապված խնդիրներին:

Հայաստանը իրավական հիմքեր ունի Արդարադատության միջազգային դատարանում հայց ներկայացնելու ընդդեմ Թուրքիայի՝ պահանջելով «համարժեք փոխհատուցում» (Արդարադատության միջազգային դատարանի «Fabrica de Chorzow, 1928» գործը), այնպես, ինչպես որ թույլ են տալիս միջազգային պատասխանատվության մասին միջազգային իրավունքի կանոնները:

«Փոխհատուցում» հասկացողությունն ավելի լայն է, քան «ծախսերը փակելը» (indemnizacion), և բացի տնտեսական փոխհատուցումից՝ կարող է ներառել տարածքների տրամադրումը:

Նաև գոյություն ունեն շրջանային (նահանգային) դատարաններ, և պետք է ուսումնասիրել, թե արդյոք դրանք իրավասու են որոշումներ կայացնելու:

Անկախ այստեղ արծարծված խնդիրներից՝ արտասահմանյան դատարանների (որոնք Թուրքիայի հետ որոշումներ են կայացնում) կատարումը պետք է մանրամասն ուսումնասիրվի միջազգային իրավագիտությունում և օրենսդրությունում:

Հարգելի՛ ընկերներ, մենք առջևում երկար ճանապարհ ունենք և բարդ խնդիրներ պետք է լուծենք. մեր նախնիների հիշատակը և մեր ազգի պատիվը դրան արժանի են:



ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
*ԵՐԵՎԱՆԻ «ԳԼԱՁՈՐ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ (ՀԱՅԱՍՏԱՆ)*

## ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ՅՈՒ. ԲԱՐՍԵՂՈՎԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ

Հայերի ցեղասպանությունը մարդկայնության և մարդկության դեմ ուղղված ամենածանր հանցագործություններից է[17]: Այն գործելու համար Թուրքիայի պատասխանատվության ու դրա հետ կապված՝ միջազգային հանրության պարտավորությունների կատարման հարցերը արդարադատության առանցքային և իրար փոխկապակցված հիմնախնդիրներից են: Համաձայն միջազգային իրավունքի նորմերի՝ ցեղասպանության հանցագործությունը հանգեցնում է պատասխանատվության՝ այդ իրավական հասկացության ողջ էությամբ ու բովանդակությամբ՝ սկսած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունից, ներառյալ պետության քաղաքական ու նյութական պատասխանատվությունը: Եթե քաղաքական պատասխանատվությունը ենթադրում է ցեղասպանության օբյեկտ դարձած ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին կառավարելու իրավունքից զրկում, ապա նյութական պատասխանատվությունն ուղղակիորեն ենթադրում է հանցագործության սուբյեկտի նկատմամբ հարկադրանքի ներգործման միջոցների և միջազգային պատժամիջոցների, ներառյալ ռազմականը, կիրառում, որոնք անմիջականորեն նպատակաուղղված են ցեղասպանության ենթարկված ժողովրդի բոլոր խախտված իրավունքների վե-

[17] Տե՛ս Международное право. Дипломатическая академия МИД РФ /отв. ред. В. И. Кузнецов/. М., 2001: Քաղվածքն ըստ Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. т. 1. М., 2002, ст. 72–87:

## Հայտարարում ենք՝

1. հայ իրավաբանների առաջնահերթ խնդիրը համարում ենք ոչ թե Ցեղասպանության ակնհայտ իրողության փաստումը, այլ հետևանքների հաղթահարման առումով իրավական հիմնավոր ու ամբողջական թղթածրարի պատրաստումը՝ համաժողովում ներկայացված մոտեցումների, առկա հետազոտությունների ու փաստաթղթերի, միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա,

2. իրավական հիմնախնդիրների շրջանակներում համագործակցելու ենք ՀՀ Նախագահի գլխավորությամբ գործող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի և Սփյուռքում գործող հանձնախմբերի հետ,

3. ստեղծելու ենք հատուկ հանձնախումբ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների իրավական թղթածրարն ամբողջականացնելու համար:

իրավաբանների համահայկական խորհրդաժողով
ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն
ՀՀ իրավաբանների միություն



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ ........ 7
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ ........ 9
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ........ 13
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ........ 23
ԼՂՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ........ 28

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՏՔԸ
ԶԵԿՈՒՅՑՆԵՐ
ԱՐԱ ՊԱՊՅԱՆ ........ 32
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ ........ 38
KATE NAHAPETIAN ........ 61
RITA AVEDISIAN ........ 67

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ
ԿԻՐՈ ՄԱՆՈՅԱՆ ........ 74
ՍԻՐԵՆ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ ........ 81
РУБЕН АВАКЯН ........ 88

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ
ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՌՈԲԵՐՏՈ ՄԱԼԽԱՍՅԱՆ .................... 92
ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ .................... 95
ՊՈՒՇԿԻՆ ՍԵՐՈԲՅԱՆ .................... 110
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
**05-06. VII. 2013**

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝ Վահե Մուրադյան
Սրբագրիչներ՝ Գոհար Կիրակոսյան
Նարինե Ղուկասյան